

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ԱՌԱՆՁԻՆ ԲԱՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը եւ Ռուսաստանի Դաշնությունը (այսուհետ՝ Կողմեր)՝

հաշվի առնելով Մաքսային միության միասնական մաքսային տարածքի գործառության նեժիմի ժամանակավոր այն բացառումները սահմանելու մասին պայմանավորվածությունը, որոնք սահմանվել են Մաքսային միության իրավապայմանագրային հիմքը կազմող՝ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով,

հաշվի առնելով Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միասնական տնտեսական տարածքների ձեւավորման գործընթացն արագ ավարտելու անհրաժեշտությունը,

ընդունելով փոխադարձ առեստրում բոլոր սահմանափակումների ամբողջական վերացման եւ երրորդ երկրների հետ առեստրում միասնական առեստրային նեժիմի կիրառման անհրաժեշտությունը,

համաձայնեցին հետեւյալի մասին.

#### Հոդված 1

Գլխավորապես մարդկանց տեղափոխման համար նախատեսված եւ Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ՄՄԱՏԳԱԱ) 8703 ապրանքային դիրքում դասակարգված անձնական օգտագործման նպատակով մարդատար ավտոմեքենաների եւ այլ շարժիչով

տրանսպորտային միջոցների, բացառությամբ 8703 ՄՄԱՏԳԱԱ ապրանքային դիրքում դասակարգված ընդհանուր օգտագործման ճանապարհներով շարժվելու համար չնախատեսված կվադրոցիկների, ձնագնացների եւ այլ մարդատար տրանսպորտային միջոցների (այսուհետ՝ ավտոմեքենա), նկատմամբ կիրառվող մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերը, ինչպես նաեւ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման չափը սահմանվում են այն Կողմերի օրենսդրության համաձայն, որի տարածքում իրականացվում է այդ ավտոմեքենաների բացթողումը, սակայն 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ Բելառուսի Հանրապետությունում սահմանված նման դրույքաչափերից ոչ պակաս:

Մի Կողմի մաքսային մարմնից մինչեւ մյուս Կողմի մաքսային մարմին «Տարանցիկ փոխադրում» մաքսային ընթացակարգով ավտոմեքենաների տեղափոխման ժամանակ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման գումարը որոշվում է՝ ելնելով այն Կողմ պետության տարածքում մշտական շրջանառության համար ավտոմեքենաների բացթողնման ժամանակ վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարներից, որոնց մաքսային մարմինը կատարում է ավտոմեքենաների բացթողումը, սակայն ոչ պակաս, քան նույն ավտոմեքենաների նկատմամբ մյուս Կողմ պետություններում ներկայացվող մաքսատուրքերի, հարկերի ապահովման գումարից:

Սույն հոդվածի դրույթները գործում են մինչեւ 2011 թվականի հուլիսի 1-ը:

## **Հոդված 2**

Մաքսային միության մաքսային տարածք ներմուծման ժամանակ մի Կողմի տարածքում բացթողնված (բացթողնման պետություն) եւ մյուս Կողմի տարածք ներմուծվող (ներմուծման պետություն) ապրանքների մասով, որոնց համար ներմուծման պետության օրենսդրությամբ սահմանվում են հատուկ պաշտպանական, հակազնագոյացման, փոխհատուցման եւ պատասխան միջոցներ կամ ապրանքների ծագման երկրից եւ դրանց ներմուծման պայմաններից կախված՝ ներմուծման պետությունը կիրառում է բացթողնման պետությունում կիրառվող մաքսատուրքից ավելի բարձր մաքսատուրք, ներմուծման պետության տարածք ներմուծելու ժամանակ իրականացվում է մաքսային հայտարարագիր

եւ կիրառվում են նշված միջոցները եւ (կամ) գանձվում են մաքսատուրքեր՝ ներմուծման պետության օրենսդրության համաձայն:

Կողմ պետության տարածքում մաքսային հայտարարագրման ենթակա են մյուս Կողմ պետության տարածքից ներմուծվող ապրանքները, այն դեպքում, երբ նման ապրանքների նկատմամբ Կողմը կիրառում է Մաքսային միության իրավապայմանագրային հիմքով նախատեսված հատուկ պաշտպանական, հակազնագցման, փոխհատուցման եւ այլ միջոցներ:

Նման միջոցներ սահմանող Կողմն իրավունք ունի սահմանելու իր տարածք ապրանքների ժամանման կարգը եւ նման ապրանքների կապակցությամբ գործողությունները:

Կողմերը միջոցներ կձեռնարկեն՝ երրորդ երկրների հետ առետրային ռեժիմների միասնականացման գործընթացն ավարտելու, ինչպես նաեւ հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցները վերանայելու համար:

Սույն հոդվածի դրույթները գործում են մինչեւ Կողմ հանդիսացող պետությունների կողմից ԵվրԱզԷսի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմին) երկրի ղեկավարների մակարդակով 2009 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 35 որոշմամբ հաստատված Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միասնական տնտեսական տարածքի ձեւավորման Գործողությունների ծրագրով նախատեսված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից:

### **Հոդված 3**

Այն ապրանքները, որոնց նկատմամբ Ղազախստանի Հանրապետությունը կիրառում է Մաքսային միության միասնական մաքսային սակագնով սահմանված դրույքաչափերից բացի այլ մաքսատուրքերի դրույքաչափեր՝ Բելառուսի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության տարածք ներմուծելու դեպքում (այդ ապրանքների ցանկը ներկայացված է

2009 թվականի նոյեմբերի 27-ի Մաքսային միության հանձնաժողովի թիվ 130 որոշման հավելվածում) ենթակա են մաքսային հայտարարագրման եւ մաքսային հսկողության, դրանց մասով գանձվում են մաքսատուրքեր՝ Մաքսային միության միասնական մաքսային սակագնի դրույքաչափերով հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի գումարների եւ ապրանքների բացթողնման ժամանակ վճարվող ներմուծման մաքսատուրքերի գումարների տարբերության չափով:

Բելառուսի Հանրապետությունը եւ Ռուսաստանի Դաշնությունն իրավունք ունեն սահմանելու իրենց տարածք նշված ապրանքների ժամանման կարգը:

Սույն հոդվածի դրույթները գործում են մինչեւ Կողմ հանդիսացող պետությունների կողմից ԵվրԱզԷսի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմին) երկրի ղեկավարների մակարդակով 2009 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 35 որոշմամբ հաստատված Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միասնական տնտեսական տարածքի ձեւավորման Գործողությունների ծրագրով նախատեսված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից:

#### **Հոդված 4**

Սույն Արձանագրության 2-րդ եւ 3-րդ հոդվածները կիրարկելու նպատակով Կողմերն իրավունք ունեն իրականացնելու նշված հոդվածների գործողության ժամկետում մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մոնիթորինգ ու հաշվառում:

#### **Հոդված 5**

Բելառուսի Հանրապետության կողմից ԵվրԱզԷսի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմին) երկրի ղեկավարների մակարդակով 2009 թվականի

դեկտեմբերի 19-ի թիվ 35 որոշմամբ հաստատված Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միասնական տնտեսական տարածքի ձեւավորման Գործողությունների ծրագրով նախատեսված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում ստանալու օրվանից, Կողմերը փոխադարձ առեւտրում չեն կիրառում արտահանման մաքսատուրքեր (հավասարազոր այլ տուրքեր, հարկեր եւ վճարներ):

Կողմերը կնքում են երրորդ երկրների հետ առեւտրում ներմուծման մաքսատուրքերի գանձման եւ ներառման կարգը սահմանող համաձայնագիր:

Կողմերը կձեռնարկեն անհրաժեշտ միջոցները՝ մինչեւ 2011 թվականի հունվարի 1-ը սույն հոդվածի առաջին պարբերության մեջ նշված միջազգային պայմանագրերը կնքելու համար:

## **Հոդված 6**

Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման եւ ժամանակավորապես կիրառվում է «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից:

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կողմ հանդիսացող պետությունների կողմից սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստացված վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից, սակայն «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ:

Կատարված է Աստանա քաղաքում, 2010 թվականի հուլիսի 5-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը սույն Արձանագրության ավանդապահն է, եւ որը յուրաքանչյուր Կողմի կտրամադրի դրա հաստատված պատճենը:

Բելառուսի  
Հանրապետության կողմից

Ղազախստանի  
Հանրապետության կողմից

Ռուսաստանի  
Դաշնության կողմից